«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Ընտանեկան դաստիարակության հոգեբանական հիմնահարցերի արծածումը հասարակագիտության առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան-Հասարակագիտություն

Հեղինակ-Մանուկյան Էլմիրա Միշայի

Ուսումնական հաստատություն-Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Ընտանիք: Տեսակները, գործառույթները ՀՀ ընտանեկան օրենսգիրքը 4

2.1 Դաստիարակություն 10

Երեխայի տարիքային առանձնահատկությունների անտեսումը 12

2.2 Դեռահասների վարքի խաթարումները ընտանեկան ու ուսումնա-դաստիարակչական աշխատանքի թերությունների հետևանք 14

2.3 Դաստիարակության մեթոդները 19

Եզրակացություն 21

Գրականության ցանկ 23

Ներածություն

Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համանքի կառուցվածքային միավոր, համարվում է պետության հոգածության առարկա: Ընտանիքը հասարակության ամուսնությամբ կամ ազգակցական կապերով կապված, համատեղ ապրող, միմյանց համար բարոյական պատասխանատվություն կրող անդամների կողմից ձևավորված սկզբնական կառույց է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Դաստիարակության պրոցեսի ուսուցչի ղեկավարումն ամենից առաջ ուղղված է այն բանին, որ և ամրապնդվի այն, ինչ անում է դպրոցը՝ ձևավորելով նոր մարդուն: Ահա այստեղ է ուսուցչի աշխատանքի անգնահատելի դերը, եթե այն կազմակերպված է գրագետ և ունի մոտեցման ճիշտ ձև:

Այսօր մենք դպրոցում լուրջ խնդիրներ ունենք՝ կապված ծնողների որոշ մասի ինքնադաստիարակության հարցերի հետ: Կա մի հին դպրոցական աֆորիզմ. «Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը մեծերի հետ աշխատելն է»: Իսկ այսօրվա դեռահասների ճիշտ դաստիարակությունը շատ հարցերում պայմանավորված է նրանց իսկ ծնողների հետ տարվող աշխատանքների որակից: Ընտանիքում երեխայի դաստիարակությունը կարող է որոշվել այնպիսի գործերով, ինչպիսիք են ծնողների ընտանեկան դրությունը, ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, ծնողների տարիքը փորձը:

Այսպիսով, աշակերտների նկատմամբ տարվող դաստիարակչական գործունեությունը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում զարգացման լայն հնարավորություններ է ընձեռնում: Միայն հարկավոր է այդ հնարավորություններն օգտագործել գրագետ:

Գլուխ 1. Ընտանիք: Տեսակները, գործառույթները ՀՀ ընտանեկան օրենսգիրքը

- Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիք: Մուրացան
- Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստ ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Վասիլ Սուխոմլինսկի
- Ընտանիքը սկսվում է երեխաներից: Յոհան Վոլֆգանգ Գյոթե
- Չկա ավելի լավ տեղ, քան ձեր տունը: Ցիցերոն

1.1 Ընտանիք- «Ընտանիք» բառը լատիներեն familia (անգլերեն familly) բառից է ծագել, որը նշանակում է տոհմ:

Ընտանիքն ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց փոքր խումբ, որն ապրում է մի հարկի տակ և վարում է ընդհանուր տնտեսություն: Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանիքը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը՝ սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս:

Առավել տարածված տիպը նուկլեար ընտանիքն է (լատ. nucleus-կորիզ), որը բաղկացած է մեկ զույգից՝ երեխաներով կամ առանց երեխաների:

Նուկլեար ընտանիքը կարող է լինել նաև լրիվ կամ ոչ լրիվ՝ բաղկացած մեկ ծնողից և երեխաներից: Ընտանիքը դառնում է ոչ լրիվ ամուսնալուծության, այրիանալու, միայնակ մայրության հետևանքով:

Եթե ընտանիքում ամուսնական զույգից և նրանց երեխաներից բացի կան այլ ազգականներ, ապա այն կոչվում է ընդլայնված ընտանիք կամ գերդաստան:

Ընտանիքը դասակարգվում է ըստ կառուցվածքի

1. Էնդոգամիա կամ էկզոգամիա-էնդոգամիա՝ ամուսնություն միևնույն սոցիալական շերտի միջև, էկզոգամիա՝ հասարակության տարբեր շերտերի միջև ամուսնություն:
2. Պոլիգամիա, մոնոգամիա և հերթափոխվող մոնոգամիա-պոլիգամիան [1]բազմամուսնությունն է, այսինքն՝ պոլիանդրա (մեկ կին մի քանի տղամարդ) և պոլիգիմի, (մեկ տղամարդ, մի քանի կին): Մոնոգամիան մենամուսնությունն է՝ մեկ կին, մեկ տղամարդ և հերթափոխվող մոնոգամիան դա կոնկրետ ժամանակաշրջանում ապրում են մեկի հետ, հետո ամուսնալուծվում և նորից են ամուսնանում:
3. Ավանդական հայրիշխանություն, ավանդական մայրիշխանություն, նեոհայրիշխանություն (նոր), նեոմայրիշխանություն և էգալիտար ընտանիք (հավասար իրավունքներով ընտանիք):

Ավանդական հայրիշխանություն-հին ավանդական ընտանիքն է, որտեղ ընտանիքի գլուխը ամենամեծ տղամարդն է:

Նեոհայրիշխանություն-երբ տղամարդը իր վրա է կրում բոլոր տնտեսական խնդիրները, մշակում է ընտանիքի հեռանկարային պլանը, իսկ կինը լուծում է կոնկրետ մասնավոր խնդիրներ և ապահովում ընտանիքի բարոյահոգեբանական կայունությունը:

Էգալիտար-երբ բոլոր իրավունքները հավասար են:

4. Լրիվ ընտանիք, կիսատ և ֆունկցիաների առումով կիսատ ընտանիք: Լրիվ ընտանիքի մոդելն արդեն իսկ պարզ է, իսկ երկրորդ խմբի ֆունկցիաների առումով ընտանիքի տեսակետներն են՝ նորմալ, բարենպաստ, անբարենպաստ և այն ընտանիքները, երբ ամուսինները ամուսնական կյանքով բավարարված են, կամ որևէ մեկը բավարարված չէ:

1.2 Ընտանիքի տեսակները և գործառույթները

Սովորաբար ընտանիքի տեսակները դասակարգվում են ըստ կառուցվածքի: Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի հիմնական տեսակ՝ միջուկային և ընդլայնված:

[1] Տես՝ էլեկտրոնային աղբյուրը՝ Doctors.am

Միջուկային ընտանիք: Ընտանիքի այս տեսակը կազմված է միայն հիմնական անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Այստեղ գործում են առաջնային՝ սերտ և անմիջական հարաբերությունները:

Ընդլայնված ընտանիք: Ընտանիքի այս տեսակի կազմում, բացի ամուսիններից և նրանց երեխաներից, մտնում են նաև պապը, տատը և այլ հարազատներ: Ընդլայնված ընտանիքի տեսակ կարող է լինել նաև, երբ երկու միջուկային ընտանիքներ միասին են ապրում:

Ժամանակակից ընտանիքի գործառույթները:

1. Վերարտադրողական-երբ ընտանիքում ծվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:
2. Տնտեսական-երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր, վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը:[2]
3. Սոցիալականացման, դաստիարակչական-դրա շնորհիվ երեխաները ընկալում են նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ վարքի նորմերն ու կանոնները:[3]
4. Հաղորդակցական-երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են՝ նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին:

Ընտանիքի սոցիալական գործառնության տեսակներն են՝

ա. դաստիարակչական ընտանիքը պարտավոր է վերարտադրել և ապահովել հասարակության մշակութային մակարդակին համապատասխան սերունդ,

բ. տնտեսվարկենցաղային ընտանիքը պարտավոր է ապահովել իր անդամների ֆիզիկական առողջությունը, երեխաների ու ծերերի նկատմամբ հոգածությունը,

գ. տնտեսական ընտանիքի անդամների մի մասը պարտավոր է միջոցներ ստեղծել մյուս մասի՝ անչափահասների և անաշխատունակների համար,

[2] «Տեսակները և գործառույթները» Ռիմա Սիմոնյան 2018

դ. նախասկզբնական սոցիալ-հսկողական ընտանիքը սահմանում է իր բոլոր անդամների միջև բարոյականության, պատասխանատվության և հասարակական այլ հարաբերությունների նորմեր,

ե. հոգևոր ընտանիքն ապահովում է իր անդամների անհատականության և հոգևոր կապի զարգացման պայմաններ,[4]

զ. սոցիալ-կարգավիճակային ընտանիքը յուրաքանչյուր անդամի համար ապահովում է որոշակի սոցիալական կարգավիճակ և սոցիալական կառուցվածքի վերարտադրության,

է. հանգստի ընտանիքը հոգում է յուրաքանչյուր անդամի հանգստի կազմակերպման, հետաքրքրությունների ապահովման մասին:

ՀՀ ընտանեկան օրենսգիրք- ՀՀ ընտանեկան օրենսդրությունը ելնում է ընտանիքի ամրպնդման, նտանեկան հարաբերությունները սիրո և հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնության, նրանց լսված լինելու, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:

Արդեն շուրջ երկու տասնամյակ է, ինչ ՄԱԿ-ը մայիսի 15-ը հռչակել է ընտանիքի միջազգային օր: Հայաստանը 2011թ-ից այս օրն ամրագրել է որպես ընտանիքի օր:

[4] Տես՝ դպրոցական մեծ հանրագիտարան գիրքը:

Հոդված 51. Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:

Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

2. Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:

Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:

Հոդված 52. Երեխաների իրավունքները և շահերը պաշտպանելու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները

Երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա:

Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

Հոդված 53. Ծնողական իրավունքների իրականացումը

1. Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:

Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:[5]

[5] [5] Տես Մխիթար Սեբաստացի կրթահամալիր «Ընտանիք»:

Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:

Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

2. Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

3. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Գլուխ 2. Ընտանեկան դաստիարակության հոգեբանական հիմնախնդիրները

- Ամեն մարդ երկու դաստիարակություն է ստանում մեկը նրան տալիս են ծնողները՝ հաղորդելով իրենց կենսափորձը, մյուսն՝ ավելի կարևորը, նա ինքն է ստանում: Թելման
- «Ինու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը» Վ. Ա. Սուխոմլինսկի
- Դաստիարակության գործում մեծագույն սխալը չափից դուրս շտապողականությունն է: Ժան-Ժակ Ռուսո
- Լավ դասատու լինելու համար հարկավոր է սիրել այն, ինչ դասավանդում ես, և սիրել նրանց, ում դասավանդում ես: Վ. Կլյուչևսկի

2.1 Դաստիարակություն

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխպայմանավորված են և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն ինչը երեխան ձեռք է բերում մանկության շրջանում ուղեկցում է նրան ողջ կյանքում:[6]

Դաստիարակության վարպետությունը կառուցվում է երեխայի ինքնուրույնությունն ընկալելու և նրան հասկանալու ու աջակցելու մանկավարժական կարողությունների հիման վրա: Մեծահասակը, հասկանալով և ուղղորդելով երեխային մանկության երկարաձիգ տարիների ընթացքում, նպաստում է մարդկային էությունն ու կենսակերպը բնորոշող երեք կարևորագույն հատկությունների ձևավորման՝ մտածելու, հաղորդակցվելու ու ինքնուրույն կողմնորոշվելու:

Այսպիսով, դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է: երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցելով, որ նա ունի ցանկություններ, նախասիրություններ և հետաքրքրություններ, ընդունակ է վստահելու կամ հակառակը, կասկածելու և վիրավորելու, կարող է կարծիք հայտնել, պաշտպանել սեփական իրավունքները և որոշումներ կայացնել: Այս ամենը պատկերացնելու համար կարևոր է սիրել և զգալ աշակերտին ամբողջ սրտով, վստահել և հավատալ նրան: Մանկավարժության հիմքում ընկած է երեխային ճանաչելու, հետևաբար նրան հասկանալու կարևորագույն սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է համապատասխան մանկավարժական մտածելակերպ և համարժեք մասնագիտական մոտեցումներ: Մանկավարժության սիրտը հմուտ մանկավարժն է, որը ոգեշնչված երեխայի ներաշխարհը ճանաչելու հնարավորությամբ,կարող է կենդանի շունչ հաղորդել մանկավարժական գործընթացին:

Դաստիարակությունը իրենից ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձնավորության ձևավորմանը:

[6] Տես՝ «Նախադպրոցական մանկավարժություն» Ս.Ա. Մարության, Ս.Մ. Դալլաքյան

Մանկավարժության մեջ լայն տարածված են նաև «ինքնադաստիարակությունը» և «վերադաստիարակությունը»:

Ինքնադաստիարակություն են կոչվում ներանձնային մղումներով պայմանավորված այն դաստիարակող ներգործությունները, որոնք ձևափոխում և կառուցում են անձնային հատկություններ՝ սեփական «ես»-ին պահանջներ ներկայացնելով: Ինքնադաստիարակության և դաստիարակության գործընթացները փոխկապակցված են: Հանրահայտ ռուս մանկավարժ Վ.Ս. Սուխոմլինսկին նշում էր, որ «դաստիարակությունն իրագործելի է միայն այնդեպքում, երբ առկա է ինքնադաստիարակությունը»: Իսկ վրացի հումանիտար մանկավարժն ի վիճակի է երեխային հաղորդակից դարձել սեփական «ես»-ի կերտմանը:

Վերադաստիարակության գործընթացը ենթադրում է երեխայի արդեն ձևավորված հատկութունների վերակառուցում հատուկ մանկավարժական աշխատանքի ներքո: Այն բավականին բարդ գործընթաց է և պահանջում է երեք պարտադիր գործոնի համադրում: Դրանք են.

- դաստիարակվողի կողմից սեփական սխալների ընդունում,
- սխալներ (օրինակ, բնավորության բացասական գծերը) շտկելու ցանկությունը,
- դաստիարակվողի կողմից գրագետ մանկավարժական աշխատանքի կազմակերպում:

Դաստիարկության ընթացքի վրա շատ է ազդում տարիքի այս կամ այն մշակութային պատկանելիությունը: Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության վրա:

Դաստիարակությամբ զբաղվող ոչ մի կառույց երեխայի անձի ձևավորման գործում ունեցած իր դերով չի կարող համեմատվել ընտանիքի հետ, վերջինս յուրահատուկ միջավայր է, որը երեխայի սոցիալական գործընթացում կատարում է հիմնական, երկարաժամկետ և կարևորագույն դեր: Ոչ ոք չի կարող անմնացորդ սիրել, հոգալ, երեխային վերաբերվել այնպես, ինչպես դա կանեն ծնողները: Դրա հետ մեկտեղ՝ ոչ մի այլ սոցիալական կառույց չի կարող վնաս հասցնել երեխայի դաստիարակությանը, որքան՝ ընտանիքը:

Ընտանեկան դաստիարակության անփոխարինելիությունը ու կարևորությունը, սակայն, չեն նվազեցնում հասարակության դաստիարակության դերը: Ընտանեկան դաստիարակությունը իր էությամբ միշտ էլ հասարակական բնույթ ունի: Հետևապես ընտանեկան դաստիարակությունն առանց հասարակության հոգածության, առանց պետության աջակցության չի կարող հասնել նշանակալի արդյունքների:

Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի վերաբերմունքի ճիշտ դրսևորումը: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հագեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե՛ երեխայի և թե՛ ծնոի կյանքը: Միայն անկեղծ սերն ու փոխվստահությունն են ծնող-երեխա առողջ փոխհարաբերությունների գրավականը:

Երեխայի տարիքային առանձնահատկությունների անտեսումը

Ծնողը պետք է տեղեկացված լինի երեխայի առանձնահատկություններից՝ դաստիարակության գործընթացը խելամիտ, ճիշտ սահուն ու հարթ կազմակերպելու համար: Երեխայի տարիքային յուրաքանչյուր շրջաբաժանում պահանջվում է ծնողից յուրահատուկ վերաբերմունք և շրջահայացություն, երեխայի ներաշխարհին ծանոթանալու ունակություն և առնչություն: Առօրյայում հաճախ են օգտագործվում «երեխայի ;պես անհոգ», «երջանիկ ինչպես երեխան» արտահայտությունները; Տեղին է մեջբերել մանկավարժ Պ.Ա. Լեբեդևի այն միտքը, որ «այբուբենը խիստ կարևոր է և անհրաժեշտ, առանց նրա հնարավոր չէ թե՛ կարդալ, թե՛ գրել, բայց տառաճանաչությունը, կարդալուն ու գրելուն տիրապետելը դեռևս չի նշանակում կրթություն, անգրագետ լինելը, դեռ կրթված լինել չէ: Նույն կերպ էլ երեխայի նկատմամբ խնամքի տարրական որոշ գիտելիքներին տիրապետելը չափազանց թերի է ընտանեկան ողջ դաստիարակության ճշգրիտ կազմակերպման համար: Վերջինս պահանջում է համեմատաբար խորը և ընդհանուր գիտելիքներ»:

Խոսելով անձի վրա հասարակական միջավայրի, կոլեկտիվի ազդեցության մասին, անհրաժեշտ է ելնել ռեֆերենտ խմբի հասկացողությունից: Բանը նրանում է, որ սոչ բոլոր մարդիկ են, նույնիսկ մոտիկ շրջապատից, ազդում դպրոցականի վրա, նա անտարբեր է դեպի շատերի կարծիքը: Յուրաքանչյուր դպրոցականի, ինչպես և յուրաքանչյուր մարդու համար գոյություն ունեն առանձին խմբեր, որոնց հետ նա որպես անձնավորություն հաշվի է նստում, կողմնորոշվում է դեպի նրանց կարծիքը, որոնց դատողությունները նրա համար շատ բան են նշանակում: Տվյալ դպրոցականի համար այդպիսի ռեֆերենտ խմբեր կարող են լինել ընտանիքը, [7]դասարանը, դասարանի առանձին աշակերտներ, առանձին ուսուցիչներ, բակի ընկերախումբը և այլն: Դաստիարակչական ներգործությունների նկատմամբ դպրոցականի անտարբեր կամ նույնիսկ նեգատիվ վերաբերմունքի հաճախ նկատվող փաստերը բացատրվում են դեպի ռեֆերենտ խմբի դիրքը կողմնորոշվելու դպրոցականի այն ձգտումով, որ թաքնված է , անհայտ դաստիարակին: Լավ է, երբ ռեֆերենտ խմբի հետաքրքրությունները, իդեալներն ու նպատակները կրում են հասարակական բնույթ:

Դպրոցական տարիքում անձնավորությունը ձևավորվում է դաստիարակության վճռական ազդեցության տակ: Դաստիարակությունը որպես հատուկ գործունեություն տարբերվում է պատահական և տարբեր ազդեցություններից իր որոշակի ծրագրով, գիտակցված նպատակով, հատուկ մշակված ու հիմնավորված ներգործության միջոցների, ձևերի ու մեթոդների կիրառմամբ: Դպրոցականի անձնավորության ձևավորման մեջ հիմնականը պետք է լինի նրա կյանքի ու գործունեության ճիշտ կազմակերպումը, դրական բարոյական, սոցիալական, հասարակական վարքի փորձը, որը ձեռք է բերում ուսուցիչների ղեկավարությամբ:

Դպրոցականի անձնավորությունը դաստիարակելիս, չի կարելի սպասել, որ նա միանգամից, բոլոր պայմաններում ու հանգամանքներում, ընտրելու է վարքի ճիշտ ձևեր: Ինչպես է իրականացվում վարքի ճշգրտումը, դպրոցականի վարքի կարգավորման և ուղղման գործուն ձևերը հանդիսանում են՝ հավասարությունն ու դատապարտումը, խրախուսանքը և պատիժը: Հավանությունն ու խրախուսելը ծառայում են որպես ամրացման

[7] Տես՝ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու Երևան 2016թ

միջոց և, շնորհիվ դրան վարքի ճիշտ ձևերի ու ճիշտ դրդապատճառների ամրապնդման ու խթանման միջոց: Դատապարտումը պատիժը հանդիսանում են վարքի ոչ ճիշտ ձևերի ու բացասական մղումների կասեցման ու արգելակման միջոց: Աշակերտին խրախուսել պետք է ոչ միայբն այն ժամանակ, երբ նա իրեն կարգին է պահել, այլև այն ժամանակ, երբ նրա վարքը դեռևս անկայուն է, որոշակիորեն չի ձևավորվել: Ավելին, խրախուսանքը հենց այս դեպքում առանձնապես գտակար է:

2.2 Դեռահասների վարքի խաթարումները ընտանեկան ու ուսումնա-դաստիարակչական աշխատանքի թերությունների հետևանք

Տարիքային այս շրջանը աչքի է ընկնում զարգացման բոլոր ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններով (մտավոր, բարոյական, ֆիզիկական, սոցիալական): Է. Շպրանգերը դեռահասության կարևորագույն բնութագիր է համարում «ես»-ի բացահայտումը: Դեռահասը սկսում է զգալ իր անհատականությունը, գիտակցել իրեն և իր կյանքի ուղին: Կուրտ Լևինը դաստիարակության կարևորագույն բնութագիրն է համարում կենսագործության դաշտի ընդարձակումը: Նա գտնում էր, որ այս տարիքի հիմնական խնդիրները պայմանավորված են դեռահասի՝ մարգինալ ստատուսով. նա ո՛չ երեխա է, ո՛չ էլ մեծ, անորոշ վիճակում է, ինչն էլ ներքին հակասությունների, ոչ ադեկվատ վարքի, մի ծայրահեղությունիցմյուսի մեջ հայտնվելու, անինքնավստահության պատճառ է:

Կարևոր է դեռահասների՝ ընտանիքում հասկացված, ընդունված և սիրված լինելու փաստը: Այս շրջանում արտաքինում տեղի ունեցող փոփոխություններից ևս հնարավոր չէ խուսափել: Սրա հետ կապված աղջիկները դառնում են ավելի ամաչկոտ, զգայուն, ձեռք են բերում բարդույթներ, որոնք մինչև այդ չեն եղել:

Այսպիսով՝ դեռահասության տարիքը համարվում է ճգնաժամային, որտեղ կարևորված է ծնողների դերը: Ծնողները հաճախ փորձում են սեփական ցանկությունները ու մտքերը պարտադրել երեխաներին, դեռահասները նույնիսկ ականատես են լինում ծնողների միջև ծագած վեճերին, որոնց պատճառները հենց իրենք են: Կոնֆլիկտները կարող են ծագել երեխաների

դաստիարակության հետ կապված: Հատկապես գյուղում հայրը կարող է լինել խիստ դաստիարակության կողմնակից և դեռահասի վարքային փոփոխություններին ընդառաջ չգնալով՝ նրան խիստ պատժել օրինակ՝ դասերից հետո զրկել ընկերների հետ շփվելու հնարավորությունից:

Մատաղ սերնդի լիարժեք ձևավորման գործընթացին մասնակցող օղակների՝ ընտանիքի, ոստիկանության անչափահասների գործերով տեսուչների և մանկական այլ հիմնարկների գործունեությունը պետք է կորդինացվի դպրոցում, որովհետև վերջինիս գործունեությունը անհամեմատ ավելի արդյունավետ է լինում, քանի որ անձը միաժամանակ գիտակցում է յուրացված գիտելիքների անհատական և հասարակական արժեքը, այսինքն իրականացվում է դաստիարակող ուսուցում: Այս համակարգը հիմնված է բարոյականության, անձի ձևավորման, սոցիալական, էթիկական, իրավական և այլ սկզբունքների վրա: Դրա վառ ապացույցը այն է, որ տեսականորեն գրեթե բոլոր անձիք, որոնց թվում և և անչափահասները, քաջատեղյակ են բարոյական չափանիշներին:

Ի՞նչն է պատճառը, որ բարոյական և իրավական նորմերի իմացությամբ զինված անձը երբեմն մոռանում է դրանով ղեկավարվելու անհրաժեշտության մասին, իր վարքում և գործունեության մեջ խախտում դրանք, ոտնահարում օրենքն ու հասարակության կարգն ու կանոնը, ո՞րն է նրա խոսքի ու գործի միջև եղած հոգեբանական անհամատեղելիության հիմնական պատճառը:

Անձի այդ բացասական կողմերը անչափահաս տարիքում բավականին հեշտությամբ կարելի է բացահայտել և հաղթահարել:

Ուսման, աշխատանքի, անհատական և հասարակական արժեքների նկատմամբ անչափահասների մի մասի մեջ նկատվող նեգատիվ վերաբերմունքի հիմքումընկած է բարոյաքաղաքական և գաղափարական դաստիարակության ցածր մակարդակը: Այսպիսի վերաբերմունքի ձևավորումը հիմնականում պայմանավորված է նրանով, [8]որ երեխան, պատանին չեն գիտակցում ուսման, աշխատանքի անհատական և հասարակական արժեքն ու նշանակությունը, չեն հասկանում սովորելու իմաստը: Խուսափելով ուսումից և աշխատանքից՝ նրանք մեծ վնաս են տալիս

[8] Տես՝ «Հոգեբանություն և կյանք» 2011

տեղեկությանը թե՛ բարոյապես, որը խանգարում է նրանց մեջ պետական մտածողության տարրերի ձևավորմանը:

Երեխայի կյանքի յուրաքանչյուր փուլում ընտանիքի դաստիարակչական գործառույթը շատ կարևոր է, սակայն գաղտնիք չէ, երբեմն էլ ճգնաժամային շրջանում: Դեռահասության տարիքը հաճախ անվանվում է դժվար, նաև անցումային տարիք, քանի որ այդ շրջանում է տեղի ունենում երեխայի չափահաս մարդու ձևավորման գործընթացը, որը կապված է հոգեկան լուրջ վերակառուցման հետ:

Դեռահասների ագրեսիվությունը ինչպես հայտնի է դեռահասության տարիքում ագրեսիվության կտրուկ աճ է նկատվում, ինչը լուրջ խնդիրներ է առաջ բերում ինչպես շրջապատի, այնպես էլ հենց իր՝ դեռահասի համար: Դեռահասության տարիքում ի հայտ են գալիս ագրեսիվության բոլոր հնարավոր ձևերը՝ բացահայտ և քողարկված, բարորական և չարորական (Է. Ֆրոմը բարորակ է համարում ինքնապաշտպանական, կենսական նշանակություն ունեցող,«օգտակար» ագրեսիան, իսկ չարորակ է անիմաստ, պաշտպանական արժեք չունեցող, զուտ դեստրուկցիային ուղղված ագրեսիան), խոսքային և ֆիզիկական, ակտիվ և պասիվ: Դուրս գալով մանկության տարիքից՝ դեռահասները՝ փորձում են հասկանալ հասուն կյանքում վարքի, միջանձնային հարաբերությունների, տարբեր կարգի սոցիալական խնդիրների լուծման օրինաչափությունները և համապատասխան օրինակներ են փնտրում: Այդ օրինակներում անշուշտ մեծ տեղ են գրավում ծնողները, և հայտնի է, որ ագրեսիվ ծնողների երեխաները սովորաբար ագրեսիվ են լինում:

Այսպիսով կարելի է ասել, որ դեռահասության տարիքում ագրեսիվության կտրուկ աճը պայմանավորված է մի շարք գործոններով: Ըստ որում՝ կոնկրետ դեպքերում, կարող է ի հայտ գալ այս կամ այն գործոնի գերակշռությունը, սակայն ընդհանուր առմամբ բոլոր գործոններն էլ այս կամ այն չափով գործառում են, ինչը հիմնախնդրի լուծման համար համալիր մոտեցման անհրաժեշտություն է առաջացնում:

Գարեգին Նժդեհը ընտանեկան դաստիարակության և հատկապես հոր դաստիարակիչ դերի հետ է կապում հայոց ապագայի կերտումը: Գերագույն է

մոր՝ հոգեփոխված և ցեղայնացած հայ կնոջ առաքինությունը: «Նա կոչված է իր երեխայի դաստիարակության միջոցով կառուցելու իր ցեղի ապագան»:

Ընտանիքը դիտվում է երեխայի սոցիալականացման գլխավոր սոցիալական ինստիտուտը, որտեղ երեխան յուրացնում է սոցիալական հիմնական գիտելիքները, ձեռք է բերում բարոյահոգեբանական կարողություններ և հմտություններ, ընդունում է որոշակի արժեքներ և գաղափարներ, որոնք անհրաժեշտ են նրանց այդ հասարակությունում ապրելու համար: Երեխայի արդյունավետ սոցիալականացման համար կարևոր նշանակություն ունի դպրոցը:

Դպրոցում՝ կրթական միջավայրում նույնպես երեխան շփվում և հաղորդակցվում է այն արժեքների հետ, որոնք կրում է այդ հասարակությունը: Կրթության գործընթացում ձեռք բերելով գիտելիքներ՝ երեխան ոչ միայն զարգանում է, այլ նաև հարմարվում է այն հասարակությանն ու սովորություններին, որտեղ ապրում է: Երբ երեխան արդեն դպրոցում է, ծնողը պետք է փորձի համագործակցության ուղիներ գտնել և, հնարավորինս համագործակցել ուսուցիչների հետ, որովհետև ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները մեր հասարակության այն անդամներն են, ովքեր հաճախ առաջնորդում են իրենց երեխաներին:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երարատև աշխատանք

է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների

համագործակցությունը փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխայի դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունը արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Այսպիսով՝ մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության երեխայի կրթական գործընթացը բարդանում է, իսկ խնդիրներն ու խոչընդոտները դառնում են անհաղթահարելի: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձի մի մասը:

Ակադեմիկոս Ա.Կ. Բորդովսկու համոզմամբ՝ կրթությունը պետք է ունենա ազգային դրսևորում: Այդ իմաստով հասարակագիտության առարկայի ուսուցման գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնել ոչ միայն այն ընդհանուր օրինաչափությունները և հիմնարար հասկացությունները, որոնք առկա են նրանում, այլ նաև տվյալ հասարակության խնդիրները, որոնք կարող են լինել առանձնահատուկ՝ կապված արժեհամակարգից, ազգային և կրոնական առանձնահատկություններից:

Այսպիսով՝ հասարակագիտության դասավանդման նպատակներից է՝ սովորողներին նախապատրաստել փոփոխվող աշխարհում ապրելուն, ընդլայնել նրանց մտահորիզոնը, արժեվորելու ընտանեկան հարաբերությունները և ընտանիքի կարևորությունը, աշխարհի մասին նրանց պատկերացումները, աշակերտներին օգնել, որ նրանք ավելի լավ հասկանան, թե ինչ է նշանակում ապրել բազմակարծիք հասարակության մեջ, լինել ինքնուրույն և ստեղծագործ:[9]

[9] Տես՝ «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածներ 2019/N1

2.3 Դաստիարակության մեթոդները

Դաստիարակության բովանդակությունը, նրա բաղադրամասերը իրականացվում են համապատասխան մեթոդներով: Դաստիարակության բաղադրամասերը և մեթոդները փոխադարձ կապվածություն ունեն: Ավելին, դաստիարակության գործընթացի բոլոր բաղադրամասերի միջև ևս կան և կապեր, և կախումներ: Դաստիարակողը, դաստիարակության մեփոդները, հնարները կիրառում է տարբեր ձևերով: Դրանց ընտրությունը և կիրառումը պայմանավորված են դաստիարակողի վարպետությամբ, ստեղծված իրավիճակով և սովորողների տարիքային և անհատական առանձահատկություններով: Ինչպես տեսում ենք դաստիարակության գործընթացում կախվածությունն ու կապերը (փոխադարձ) ընդգրկում են նաև դաստիարակի գործունեությունը, նրա յուրահատկությունները:

Դաստիարակության գործընթացում այս կամ այն մեթոդի ընտրությունը և կիրառումը ունեն դաստիարակության բաղադրամասի (օրինակ՝ մտավոր, բարոյական, ընտանեկան դաստիարակության) նպատակից, խնդիրներից, տվյալ դեպքում այն բաղադրամասից, որից իրականացվում է դաստիարակությունը, իսկ բաղադրամասն էլ կախում ունի կիրառվող մեթոդներից, հնարներից ու միջոցներից, իսկ դրանք բոլորը՝ դաստիարակությունն իրագործող դաստիարակից և դրա համար ստեղծված պայմաններից:

Ճիշտ չի լինի միայն մեկ կամ երկու մեթոդով իրականացնել դաստիարակության այս կամ այն բաղադրամասը: Տվյալ դեպքում որևէ բաղադրամասից դաստիարկության իրականացումը ենթադրում է մի շարք մեթոդների, կամ մեթոդների խմբերի զուգակցված գործադրում:

Դաստիարակության տեսությունում առկա են դաստիարակության մեթոդների տարբեր դասակարգումներ: Ժամանակակից դպրոցում կիրառվում են Գ.Ի. Շչուկինայի կողմից դասակարգված մեթոդներից հետևյալ խմբերը.

1. Անձի գիտակցության մեթոդներ,
2. Անձի գործունեության ու հասարակական վարքի փորձի կազմակերպման և ձևավորման մեոդներ,
3. Անձի վարքի ու գործունեության խթանման մեթոդներ:

Դաստիարակութան հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել է և մնում է դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը: Դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերվող ներքին և արտաքին կանոններ:

Մխիթար Գոշը (12-րդ դար) նշում էր, որ զավակների և հանցանքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները:

Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարություն, ազնվություն և մարդասիրություն:

19-րդ դարի հայ գրողներն էլ (Խ. Աբովյանը, Ռ. Պատկանյանը, Ղ. Աղայանը) աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ տեղ էին տալիս ընտանիքին: Նրանք ընդգծում էին ընտանիքի վճորոշ դերը՝ երեխայի ապագայի ճիշտ կազմակերպման, նրա հակումների անկաշկանդ զարգացման առումով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Հասարակագիտություն» առարկայի նպատակները, ուսումնառության ընթացքում ի հայտ եկող խնդիրները հանգեցինք այն եզրակացության, որ ոչ լիարժե ընտանիքը, իր ամբողջ զոհաբերության և մոր հերոսական ջների շնորհիվ, չի կարող ապահովել երեխայի համար սոցիալականացման լիարժեք պայմաններ:

Չի կարելի անտեսել, որ ոչ լիարժեք ընտանիքի երեխան ավելի հաճախ հանդիսանում է բարեկեցիկ ընտանիքի կողմից բարոյահոգեբանական ճնշման:

Շատ կարևոր է, որպեսզի «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների աջակցությամբ աշակերտները համակարգված հարստացնեն ու համալրեն իրենց գիտելիքները, տիրապետեն մարդկային մտքի ձեռքբերումներին, ազգային և համամարդկային բարոյական արժեքներին, նորմերին: Նաև աշակերտի մեջ պետք է կարողանալ սերմանել սերը ուսման և ընտանիքի նկատմամբ, բարձր գնահատելով ընտանեկան և մարդկային կարևոր արժեքները, ինչպես նաև սերը և հարգանքը ծնողների և շրջապատող մարդկանց նկատմամբ:

Ուսումնասիրության ընթացքում ևս մի կարևոր խնդրի հետ բախվեցինք: Սկզբնական շրջանում ինչ-որ բան կատարել չկարողացող և դրանով շրջապատի վրա անբարենպաստ տպավորություն գործող աշակերտները «Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ սկսում են արագորեն տիրապետել հմտություններին և կարողություններին և շուտով վարպետության հասնելու ճանապարհին առաջ են անցնում շատերից:

Այսպիսով շատ կարևոր է, որ ժամանակի նոր մարտահրավերների պայմաններում կրթությունը կարողանա արդյունավետ արձագանքել և հասարակագիտական խմբի առարկաների միջոցով սովորողների գիտակցության մեջ ճիշտ ամրագրել հասարակության կյանքում տեղի ունեցող երևույթները: Վերջինս թույլ կտա սովորողներին ճիշտ կողմնորոշվել կյանքում և մեկնաբանել բոլոր փոփոխությունների հիմքում ընկած դրսևորումների պատճառահետևանքային կապերը:

Ավարտելով խոսքս՝ ցանկանում եմ շեշտել մեծն Մակարենկոյի խոսքերը «Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակենք, մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակենք՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»:

Ուրեմն, կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով «դաստիարակել» ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը:

Գրականության ցանկ

1. Էլեկտրոնային սկզբնաղբյուրը՝ Doctors.am
2. Մխիթար Սեբաստացի կրթահամալիր «Ընտանիք: Տեսակները և գործառույթները»: Ռիմա Սիմոնյան, 2018թ.
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 2004թ.
4. «Նախադպրոցական մանկավարժություն», Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան
5. «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները» Գիտաժողովի նյութերի ժողովածու, 2016թ.
6. «Մանկավարժական հոգեբանության հիմունքները», Վ.Ա. Կրուտեցկի
7. Հոգեբանություն և կյանք, 2011թ.
8. «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հոդվածներ 2019թ./ N1
9. Մանկավարժություն (Ուսումնական ձեռնարկ) Յ.Ա. ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, 2005թ.